ՀԱՐՑԱՇԱՐ
ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հարց 1.
Համապարտադիրություն՝ Բոլոր հարկ վճարողները պարտավոր են Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում, կարգով և չափով՝

Հաշվարկել և վճարել հարկեր ու վճարներ:

(հոդ. 3, մաս 1 <5>)

Հարց 2.
Պետական և (կամ) հասարակական կարիքների բավարարման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ վճարվող պարտադիր և անհատույց գումար, որը վճարվում է հարկ վճարողների կողմից՝ Օրենսգրքով սահմանված կարգով, չափերով և ժամկետներում ՝

Հարկ:

(հոդ. 4, մաս 1)

Հարց 3.
Հարկային օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված՝ վճարման վերջնաժամկետում չվճարված կամ չմարված հարկի կամ վճարի գումարը՝

Ապառքն է:

(հոդ 4, մաս 1, կետ 5)

Հարց 4.

Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են պետական հարկերի տեսակներն են ՝

Ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը, շահութահարկը, եկամտային հարկը, բնապահպանական հարկը, ճանապարհային հարկը, շրջանառության հարկը:

(հոդ. 6, մաս 1)

Հարց 5.
Հայաստանի Հանրապետությունում ինչպիսի հարկման համակարգեր են գործում են

Հարկման ընդհանուր և հատուկ համակարգեր:

(հոդ. 8, մաս 1,)

Հարց 6.
Հարկման միևնույն օբյեկտը հաշվետու ժամանակաշրջանում նույն հարկ վճարողի մոտ նույն տեսակի հարկով հարկվում է՝

Միայն մեկ անգամ:

(հոդ. 10, մաս 3)

Հարց 7.
Հարկի հաշվարկը կատարվում է՝

Հայկական դրամով:

(հոդ. 14, մաս 7)

Հարց 8.

Հարկից ազատումը, հարկման օբյեկտի նվազեցումը, հարկման բազայի նվազեցումը, հարկի դրույքաչափի նվազեցումը, հարկի նվազեցումը, հարկի վճարման ժամկետի հետաձգումը՝

Հարկային օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնություններ են:

(հոդ. 19,մաս1)

Հարց 9.
Օրենսգրքի կիրառության իմաստով՝ ֆիզիկական անձինք են համարվում՝

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերը և նոտարները:

(հոդ. 24, մաս 1)

Հարց 10.
Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները հարկային մարմնին տրամադրվում են՝

Օրենքով սահմանված կարգով:

(հոդ. 350, մաս 4)